# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ.

## ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ.

Ֆրանսիայի Կլերմոն — Ֆէրրան քաղաքում տօնուեցաւ մայիսի 7-ին խաչակրութեան 800 ամեակը։ Այս հանդիսին ներկայ են եղել 40 եպիսկոպոսունք, որոնք զգեստաւորուած և Մալթայի ասպետների ուղեկցութեամբ եկեղեցական թափոր են կատարել։ Փողոցներն ու տները զարդարուած են եղել տօնական ձևով. մայր եկեղեցին առանձնապէս զարդարել են խաչակրաց ժամանակուայ մնացած դրօշներով։ Նշանաւոր քարոզիչ հ. Մօնսաբրէն է խօսել հանդիսական ճառը, որի մէջ նա այժմեան Ֆրանսիային հրաւէր է կարդում Պետրոս Ամիենացու շաւղով ընթանալ և մի նոր խաչակրութիւն սկսելու ընդդէմ անհաւատութեան։ Երբ ճառախօսը աւարտեց իր խօսքը, բոլոր եկեղեցին, եպիսկոպոսները, քահանայք և ժողովուրդ միաձայն ըսկըսեցին գոչել խաչակիրների նշանաբանը. „Dieu le veux' Dieu le veuz.“ (Աստուած կամենում է այդ. Աստուած կամենում է այդ)։

— Իտալական ազգային ժողովի (պառլամէնտ) ընտրութիւններն սկսուել են և մեծ եռանդով շարունակւում են։ Արդէն իսկ յաղթութիւնը Կրիսպիի նախարարութեան կողմն է, որ շատերը վերագրում են կաթոլիկների աջակցութեան. թէպէտ և Լեոն ԺԳ. պապն էլ իր նախորդի արգելքը կրկին նորոգեց։ Ինչպէս յայտնի է Պիոս Թ. պապը մի յատուկ ընդհանրականով որ կոչւում է „Non expedit“ արգելել է իտալացի կաթոլիկներին մասնակցել պառլամէնտի ընտրութիւններին, բայց ինչպէս երևում է այդ արգելքը միայն ձևական է. որովհետև իտալացի ընտրողներից 70 տոկոս. մասնակցում են ընտրութիւններին։

— Աւստրա — Հունգարիայում վերջին ամիսներս մեծ աղմուկ հանեց պապի ներկայացուցչի, նուիրակ (nuntius) Ալիարդիի ընթացքը, որ խորհրդակցութիւն է ունեցել հունգարական եկեղեցու պետերի հետ նոր եկեղեցական օրէնքների առթիւ։ Հունգարական նախարարութեան նախագահ Բանֆին բողոքեց այդ ընթացքի դէմ, որի հետևանքն եղաւ կայսրութեան արտաքին գործոց նախարարի կոմս Կալնոկու հրաժարուելն իր պաշտօնից։ Թէպէտ և լրագիրները հռչակեցին՝ թէ Ալիարդին յետս պիտի կոչուի վատիկանի կողմից, սակայն վատիկանի բերան թերթերն հերքեցին այդ լուրը։

—

— Վարշաւի եպիսկոպոս գերապ. Պոպիէլն հրաման ստանալով կառավարութիւնից վերջապէս գնացել է Հռոմ քահանայապետին իր որդիական այցելութիւնն անելու։

—

## ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

*Ամերիկական Բիբլիական ընկերութեան գործունէութիւնը.*— Ամերիկայի Բիբլիական ընկերութիւնը 140 շրջող գրավաճառներ (kolporteur) ունի զանազան պետութիւնների և երկրների մէջ։ Անցեալ տարուայ ինն ամսուայ ընթացքում նոքա այցելել են մօտ 97 600 ընտանիք, որոնցից 9·600 կաթոլիկ էին։ Նոքա վաճառել կամ ընծայել են 75·694 կրօնական գրքեր, բացի Աստուածաշնչից։ Թէ որքան անհրաժեշտ էին այդ այցելութիւնները և նոցա ժողովները, երևում է այն հանգամանքից, որ 4·462 ընտանիք Ս. Գիրք չունէին. իսկ 20·089 ընտանիք ամենևին եկեղեցի չէին յաճախում։

Այդ ընկերութիւնը հիմնուել է 1816 թ. արդէն առաջուց 1809-ից կազմուած էին մի քանի մանր ընկերութիւններ, որոնք միանալով կազմեցին Ազգային Բիբլիական ընկերութիւնը, որի նպատակն է տարածել Ս. Գիրքը մաքուր և անաղճատ, առանց յաւելումների կամ նկատողութիւնների, ամէն լեզուով և բոլոր ազգերի մէջ, մանաւանդ Միացեալ նահանգներում։

36 աշխարհական անձինք ընկերութեան ղեկավարներն են, կենդրոնն է Նիւ Եօրք, 1853-ից ի վեր կառուցած հոյակապ վեցյարկանի գրատունը (Bibelhaus)։ Այս տեղ են տպարանները, կազմարանները, գրասենեակներն ևլն.

Այդ ընկերութիւնը 2·000 ճիւղեր ունի Միացեալ նահանգներում։ 21 սուպերինտենդենտ շրջող գրավաճառների հետ այդ ընկերութեան պաշտօնական ներկայացուցիչներն են կազմում բոլոր նահանգներում։ Վերջին տարուայ ընթացքում բուն երկրի համար տպուած է 964·766 օր. Ս. Գիրք, զանազան լեզուներով. իսկ արտասահմանի համար 76·194 օր.։ Դորա վերայ պէտք է աւելացնել նաև ընկերութեան հաշուով և նորա գործակալների ձեռքով արտասահմանում տպուած 407·699 օր.։ Ընկերութեան գործակալները տարածուած են Մեքսիկայում, կեդրոնական և հարաւային Ամերիկայում, Տաճկաստանում, Փոքր Ասիայում, Ասորիքում, Եգիպտոսում, Պարսկաստանում, Հնդկաստանում, Ճափոնիայում և Չինաստանում։ Ամերիկական Բիբլիական ընկերութեան հրատարակած Ս. Գրքի կամ մասերի թիւը իր գոյութեան օրերից մինչև այժմ է 58·374·430։

*Քրիստոնէութեան տարածումը Ճափոնիայում.* — Հետեւեալ թուերը ցոյց են տալիս, թէ ինչպիսի արագ քայլերով է տածւում քրիստոնէութիւնը Ճափոնիայում. Միայն բողոքական միսիոնարների թիւը այր և կին 625 է. համայնքների թիւը 634, որոնցից 91 բոլորովին անկախ են, իսկ 270 միայն մասամբ են օժանդակութիւն ստանում. Վերջին տարին մկրտուածների թիւն է 3·425 հասակաւոր և 675 մանուկ. Քրիստոնէութիւնը թողել են 925 հոգի և վախճանուել 419. Բոլոր բողոքական հաւատացեալների թիւն է 33·240. Աստուածաբանական դպրոցների թիւը քսան է, 350 ուսանողներով. Բնիկ քարոզիչների թիւը 258.

—

*Ս. Գիրքը Ճափոնական զօրքի մէջ.* — Անգլիական և Ամերիկական Բիբլիական ընկերութիւնները ձեռք ձեռքի տուած գործում են հեռաւոր արեւելքում. Նոքա տասնեակ տարուց ի վեր Ճափոններէն մաքուր թարգմանութեամբ տարածում էին Ս. Գիրքը ոչ միայն քաղաքներում, այլ և գիւղական խրճիթներում. Վերջին Չին—Ճափոնական պատերազմը թէպէտ փոքր ինչ շարժեց խաղաղ գործունէութեան ընթացքը, բայց մի և նոյն ժամանակ գործանով բոլորովին մի նոր ճանապարհ բացուեցաւ նոցա առաջ. Ծննդեան տօներին ամերիկական ընկերութեան գործակալը Հիրոսիմայից դիմեց պատերազմի դաշտը. Նա կարողացաւ 1½ ժամուայ ընթացքում 1·000 օրինակ Աւետարան տարածել զօրքի մէջ. Երեք օրից յետոյ արդէն 4·000 օրինակ էր տարածուած. Մի բուդդայական փորձեց արգելքներ յառաջացնել, բայց նկատելով որ գործանով կրակի վերայ նաւթ է լցնում. ստիպուեցաւ յետ կենալ. Միկադոյի (կայսր) արքունիքի քարտուղարը, որ քրիստոնեայ է, 2·000 օր. Նոր Կտակարան յանձնեց Չինաստան ուղեւորուող մի նաւի ղեկավարին, այն տեղ զօրքի մէջ տարածելու համար. Յառաջադիմութիւնը մեծ է. Միսիոնարները իրաւունք ստացան նոյնպէս հիւանդանոցներում (զինուորական) Ս. Գիրք տարածելու. Տօկիոյի զօրաբանակի փոխ հրամանատարը իրաւունք տուեց իւր իշխանութեան տակ գտնուող գնդերի մէջ առանց արգելքի Ս. Գիրք տարածել. սիրալիր զօրապետը մինչև իսկ յանձնեց այն տեղերի ցուցակը, ուր գտնւում են իւր իշխանութեան տակ գտնուող գնդերը: Ամենից առաջ 1·000 օրինակ հիւանդներին և վիրաւորուածներին բաժանուեցաւ, որոնք աւելի մխիթարութեան կարօտ էին. Երբ ընկերութեան գործակալը երևում էր զօրքի մէջ, նորան շրջապատում էին զինուորները և խնդրում քարոզ խօսել, պատմել Ս. Գրքի բովանդակութեան մասին. Մինչև յունուարի վերջը 3·000 աւետարան է ցրուած զօրքի մէջ Ամերիկայի Բիբլիական ընկերութեան ձեռքով.

—

Պաստոր Ֆ. Բոդելշվինգը Վեստֆալիայի Բիլեֆիլդ քաղաքի մօտ գտնուած հռչակաւոր, քրիստոնէական հաստատութիւնների վերատեսուչն է և յայտնի իւր քրիստոնէական մեծամեծ ձեռնարկութիւններով. սա մտադիր է Վեստֆալիայի Հերֆորդ քաղաքում մասնաւոր նուիրաբերութիւններով աստուածաբանական գիտութիւնների, պետական համալսարաններից անկախ, մի ֆակուլտետ բանալ. Նպատակն է իւր հովանաւորութեան տակ քրիստոնէական ոգով քահանայացուներ կրթել, դժգոհ լինելով պետական համալսարանների ազատ ուղղութիւնից. Սակայն այդ մտադրութիւնը մեծ հակառակութեան է հանդիպում ոչ միայն ազատ ուղղութեան ներկայացուցիչների կողմից, այլ նոյն իսկ իւր բարեկամների շրջանում.

—

Վեստֆալիայում մի ընկերութիւն է հիմնըւած որի նպատակն է քահանաների և ուսուցիչների զաւակներին օգնել տնային, գիտական և գործնական կոչումների մէջ կատարելագործուելու.

—

Մի քանի ամիս առաջ Բերլինում առաջին անգամ «փրկութեան բանակ»-ի (Heilsarmee) կոնգրես եղաւ. Բանակի հրամանատար Booth—Tucker-ի տըւած տեղեկութիւնների համեմատ ամբողջ աշխարհում 11·000 փրկութեան օֆիցերներ կան, անցեալ տարի 250 000 նոր անդամներ է վաստակել, որոնցից 25·000 յայտնի արբեցողներ են եղել: 265 հաստատութիւն ունին, որոնցից 55 «փրկութեան տներ» (Rettungshäuser) անկեալ աղջիկների և կանանց համար, 40 ապաստանարան պատժից արձակուածների համար, 24 գրասենեակներ բանուորներին աշխատանք գտնելու համար, 6 գաղթավայրեր և այլն. Ծախս 1·460·000 մարկ, որից 1·400·000 իրենք են աշխատել. Սրանք 25·000 հնդիկ դարձի են բերել, 17 հեթանոսական տաճար յանձնուած է իրենց գործադրութեան.

Դա մի նոր շարժում է, որ սկիզբն է առել Անգլիայում և այն տեղից տարածւում է այժմ եւրոպական միւս երկրներում. Անունը արդէն ցոյց է տալիս նպատակը. փրկել անկեալներին, արբեցողներին, անբարոյականութեան զոհերին, նոյնպէս և բարոյապէս օժանդակ լինել կարօտեալներին. Գլխաւոր սկզբունքներից մէկն այն է, որ հէնց փրկուածները գործակից լինեն ուրիշների փրկութեան գործին. Նպատակը սուրբ և համակրելի, սակայն մի քանի դէպքում չափազանցութեան մէջ են ընկնում և այդ օգտակար շարժումը փոքր ինչ միստիքական — աղանդաւոր կերպարանք է սկսում ստանալ.

—